



ք. Գավառ, Գր. Լուսավորչի 36
հեռ. (0264) 6-15-11

Էլ. հասցե: info_gavar@aarhus.am

N AA - 011

« 17 » Նոյեմբերի 2015թ

ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ»
ՊՈԱԿ Տնօրեն՝ Մարտուն Մաթևոսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մաթևոսյան

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրինակի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը, որպես լիազոր մարմին՝ խնդրում եմ Գեղարքունիքի մարզի անտառային տարածքների վերաբերյալ Գավառի Օրինու կենտրոնին տրամադրել հետևյալ պաշտոնական տեղեկատվությունը.

1. Որքա՞ն տարածք են ընդգրկում Գեղարքունիքի մարզի անտառային տարածքները, նշելով անտառային և անտառածածկ մակերեսները /տրամադրել ըստ տարածաշրջանների՝ Գավառ, Մարտունի, Սևան, Վարդենիս, Ճամբարակ/,
2. Վերջին 5 տարվա ընթացքում Գեղարքունիքի մարզի անտառային տարածքներում ի՞նչ աշխատանքներ են տարվել անտառների պահպանության և պաշտպանության ոլորտներում,
3. Վերջին 5 տարվա ընթացքում Գեղարքունիքի մարզի անտառային տարածքներում ի՞նչ աշխատանքներ են տարվել կենդանական աշխարհի պահպանության ոլորտում,
4. Վերջին 5 տարվա ընթացքում Գեղարքունիքի մարզի անտառային տարածքներում ի՞նչ աշխատանքներ են տարվել անտառվերականգնման և անտառապատման ոլորտներում /տրամադրել ըստ տարածաշրջանների՝ Գավառ, Մարտունի, Սևան, Վարդենիս, Ճամբարակ և ըստ ծառատեսակների /,
5. Վերջին 5 տարվա ընթացքում Գեղարքունիքի մարզի անտառային տարածքներում ի՞նչ աշխատանքներ են տարվել անտառների հաշվառման և անտառօգտագործման ոլորտներում,
6. Մանրամասն տեղեկատվություն վերջին 5 տարվա ընթացքում Գեղարքունիքի մարզի անտառային տարածքներում հատկացված հատատեղիների տարածքների և մակերեսների վերաբերյալ, ինչպես նաև ապօրինի հատումների և սանիտարական հատումների վերաբերյալ առանձին-առանձին:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի,

խնդրում ենք տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով,

Գավառի Օրհուս կենտրոնի համակարգող



Լ. Ասոյան